Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 9-ի N 27 - Ն որոշման

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Ընտանիքների սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգը (այսուհետ՝ Գնահատման համակարգ) Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի մաս է:

2. Գնահատման համակարգի տեղեկատվական շտեմարանը ձևավորվում է դիմողի առցանց ներկայացրած դիմումից և փաստաթղթերից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Միասնական սոցիալական ծառայության, վերջիններիս հասանելի այլ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների տեղեկատվական շտեմարաններում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալներից, դիմողի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով իրականացվող տնայցի արդյունքներից, որոնք անհրաժեշտ են տվյալ ընտանիքի անապահովության գնահատման համար և անապահովության հիմքով սոցիալական աջակցություն ստանալու իրավունքի իրացման համար:

3. Գնահատման համակարգում ներառվում են դիմող ընտանիքի անդամների մասին հարակից շտեմարաններում առկա տվյալները՝ համաձայն սույն որոշման Հավելված N 3-ի:

4. Գնահատման համակարգում տվյալները մշակվում և պաշտպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Ընտանիքի անապահովության գնահատման գործընթացում տվյալների ստացման անընդհատության ապահովման նպատակով՝ սույն որոշմամբ սահմանված տվյալները ստացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով կամ սույն որոշմամբ սահմանված այլ եղանակներով Գնահատման համակարգի սպասարկման և վարման լիազոր կազմակերպությունն ստանում է սույն որոշմամբ նախատեսված տվյալները պետական մարմիններից և կազմակերպություններից անմիջականորեն:

6. Գնահատման համակարգի և առկա հարակից շտեմարանների համապատասխան տվյալները փոխանակվում են համապատասխան տվյալների շտեմարանների միջև՝ համաձայն սույն որոշման Հավելված N 3-ի՝ անձի նույնականացման համար կիրառելով հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան և համարը):

7. Սույն որոշմամբ սահմանված վարչական ակտերի բողոքարկման, օրենսդրությամբ սահմանված վերահսկողության կամ հսկողության իրականացման և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում՝ ստացված տվյալների ստուգման ապահովման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները պարտավոր են պահպանել տրամադրված տվյալները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

8. Ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների, կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև տվյալները փոխանակվում են համատեղ համաձայնեցված այլ ձևաչափերով:

9. Գնահատման համակարգում ընտանիքների տվյալները մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ ընտանիքներին անապահովության գնահատման և անապահովության հիմքով սոցիալական աջակցություն տրամադրելու որոշում ընդունելու նպատակով կամ օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ